ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ԲԸԱՀԾՁԲ-11-60» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04-ը օգոստոսի 2016թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

գնահատողներ

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդականԳ. Ոիստյան,

ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության արարողակարգի և միջոցառումների իրականացման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Վ. Հովհաննիսյան,

ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան,

ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կատարողականի աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Աթանեսյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

«ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Առաջարկած գնման առարկաների տեխնիկական հատկանիշների՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության մասին.
4. Յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկի մասին.
5. Տեղեկությունն՝ բանակցություններ վարելու և ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
6. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մաղաքյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնումն իրականացվել է **www.armeps.am** կայքի միջոցով, բացի այդ, ընթացակարգի հրավերն ուղարկվել է «Արմենիա Թրավել+Մ», «Կրիպտոն», «Տրինիդատ», «Վինգս Ընդ Վիլս», «Վինդ Ռոուզ Թրավել-Պրո», «ՄԱՐԻ ԹՐԱՎԵԼ», «ԻՄՊԵՐԻԱ ԹՐԱՎԵԼ» «Լայֆ Տուր», «ԱՎԻԱՏՐԱՆՍ» ՓԲԸ, «Սփեյս Թրեվըլ», «ՔՐՈՆԻԿՍ», ԹՐԱՎԵԼ», «Ֆեստա», «Սպուտնիկ», «Վիզա Կոնկորդ Թրևլ» ՍՊԸ և «ՍՍ Թրեվլ» ՍՊԸ-ների էլեկտրոնային հասցեներին և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

1.2 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Ավիատոմսերի վաճառքի ծառայությունների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի տվյալներ
1.	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 2/1

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

2. «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝ «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, քանի որ առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝ մասնակցի կողմից գնային առաջարկում նշվել էր չվերթի ուղղությունը Երևան-Մոսկվա-Վոլգոգրադ-Մոսկվա-Չելյաբինսկ-Մոսկվա-Երևան, սակայն առաջարկված չվեթի համարներով ուղղությունն տարբեր էր՝ Երևան-Մոսկվա-Չելյաբինսկ-Վոլգոգրադ-Մոսկվա-Չելյաբինսկ-Մոսկվա-Երևան:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը հանձնաժողովը որոշեց 2-րդ չափաբաժնի մասով մերժել «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

3. Առաջարկած գնման առարկաների տեխնիկական հատկանիշների՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված գնման առարկայի տեխնիկական հատկանիշները համապատասխանում են «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը

(Ա. Մաղաքյան)

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը՝ Ավիատուրների վաճառքի ծառայություններ ներկայիս ուղղություններով	Հ/մ	Քանակը	Նախահաշվային ընդհանուր գին /դրամ/	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ի առաջարկ /չափաբաժնի գին/	1-ին տեղ /հաղթող/ զբաղեցնող մասնակից
1.	Վոլգոգրադ /Ռուսաստանի Դաշնություն/	1	հատ	360,000	297,000	«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ
2.	Վոլգոգրադ, Չելյաբինսկ /Ռուսաստանի Դաշնություն/	1	հատ	650,000	415,000	—

4.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը /համապատասխանում է /ճիշտ է/. Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցը սույն ծառայությունների մասով ԱԱՀ չի վճարում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0

5. Տեղեկությունն՝ բանակցություններ վարելու և ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի/ների/ որոշման մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել: «ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված

գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող /հաղթող/ ճանաչվեց «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ:

Հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարվեց չկայացած, հիմք ընդունելով հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

5.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ԲԸԱՀԾՁԲ-11-60» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող՝	Գ. Ուստյան
Գնահատող՝	Ա. Մուրադյան
Գնահատող՝	Վ. Հովհաննիսյան
Գնահատող՝	Ա. Հակոբյան
Գնահատող՝	Ս. Աթանեսյան
Քարտուղար՝	Ա. Մաղաքյան